ԼՈՒՍԱՊԱՆԱԿ

Մանկապատանեկան գրական-մշակութային ամսագիր

Թիվ 2, 2021թ.

Անգին մայրիկիս

Իմ սիրելի՛, անգին մայր, որքա՜ն անքուն գիշերներ ես անցկացրել, որ ես ոչնչից հետ չընկնեմ: Իմ ծո՜վ բարություն, իմ անփոխարինելի՛ ընկեր, իմ անձնազոհ մայր, գիտեմ, թե որքան էլ բարկացնեմ քեզ, հոգուդ խորքում միշտ էլ ներողամտություն կգտնվի ինձ համար: Ինչու գրեցի՝ անփոխարինելի ընկեր, որովհետև ոչ ոք չի կարող լրացնել քո տեղը:

Սիրում եմ քեզ անբացատրելի զգացողությամբ: Որքան էլ բառերով փորձեմ նկարագրել իմ սերը քո հանդեպ, էլի քիչ է ու քիչ:

Շուշանիկ Հարությունյան
Գեղակերտի միջն. դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի

ԲԱԼԶԱԹՑԻՆԵՐԻ ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԻՑ

Վաղո՜ւց, շա՜տ վաղուց մի փոքրիկ գյուղ կար, որի անունը Բալզաթ էր: Էս գյուղի բնակիչներն անսահման անխելք էին: Մի օր հորդառատ անձրև է տեղում և անմիջապես դուրս է գալիս պայծառ արևը. ասես անձրև էլ չի եկել: Ողջ գյուղի երկայնքով դուրս է գալիս մի շատ գեղեցիկ ծիածան: Բալզաթցիները, ծիածանի հայտնվելուն պես, վազում են դեպի գունագեղ կամարը: Գյուղի առաջնորդը, որը համարվում էր ամենախելացին, նայելով ծիածանին՝ ասում է.

- Այս ծիածանի գույներն այնքան էլ վառ չեն: Կարծում եմ՝ պետք է ավելի պայծառ երանգներ ավելացնենք, որ ծիածանը առավել գեղեցիկ լինի:

Արագ հավաքվում են, բերում են ներկերով լի դույլերն ու վրձինները: Մեկը մյուսի ուսին է կանգնում, որ հասնեն ծիածանին, բայց՝ ապարդյուն: Հանկարծ ծիածանն անհետանում է, հիմարները մեկը մյուսի գլխին ընկնելով՝ ներկերով լի դույլերն իրար վրա գցելով՝ հայտնվում են ծիծաղելի իրավիճակում:

Անահիտ Ստեփանյան
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, 3-րդ դասարան

«Էշի ականջում» քնածը

Կար-չկար, մի մարդ կար: Նա ապրում էր գյուղում: Էս մարդը շատ անբան էր. ո՛չ հողն էր մշակում, ո՛չ էլ այգին էր խնամում:

Գարունը բացվում էր, թե չէ, ողջ գյուղն աշխույժ գործի էր անցում, իսկ նա կարծես «էշի ականջում» քնած լիներ. շվշվացնելով ման էր գալիս:

Եկավ բերքահավաքի ժամանակը. բոլորը բերքը հավաքեցին, պահուստավորեցին ու պատրաստվեցին ձմռանը, անբանը դեռ երգում էր: Շուտով եղանակը ցրտեց, իսկ նա ո՛չ վառելու փայտ ուներ, ո՛չ էլ՝ ուտելիք: Ցրտահարված դռնեդուռ ընկավ, օգնություն խնդրեց հարևաններից, բայց հարևանները որոշեցին պատժել անբանին ու չօգնեցին: Երբ արդեն ձմեռը փռեց իր թևերը անբանն արդեն հուսահատվեց ու զղջաց, որ ողջ տարին չի աշխատել: Նա հասկացավ, որ «էշի ականջում» քնած մնալով՝ հնարավոր չէ ապրել:

Հրաչյա Հովսեփյան
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, Արևելյան դպրոց-պարտեզ, 3-րդ դասարան